ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Վինդորանի ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Երկարաթև պոլո շապիկը պետք է լինի կիսաբամբակյա մոխրագույն տրիկոտաժե փափուկ և հաճելի գործվածքից, բամբակի պարունակությունը՝ 50%-ից ոչ պակաս, խտությունը՝ 220գ/մ2-ից ոչ պակաս, որը հեշտ է խնամել և չի պահանջում հատուկ լվացման կամ արդուկման պայմաններ: Երկարաթև պոլո շապիկի վերնամասն օձիքով է և կոճկվում է երեք կոճակներով, շապիկը նախատեսված է աշնանային և ձմեռային սեզոնների համար: Շապիկի կրծքավանդակի ձախ մասում պետք է լինի գրպանի իմիտացիա, այսինքն՝ «լեզվակ», որի վրա կրելու ժամանակ կամրացվի միասնական նմուշի անվանական կրծքանշանը: Կարերի համար թելի գույնը կարող է տարբերվել գործվածքի գույնից՝ լինել ավելի մուգ, բայց ոչ մի դեպքում ավելի բաց: Հանդերձանքի տեսքը տես՝ նկար 1-ում: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված, հավաստագրված փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն՝ Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրի համապատասխանության վերաբերյալ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Виндоран ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	